

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ՃԱՌԸՆՏԻՐ ՁԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՅՈՒ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Միջնադարյան հայերեն հնագույն ձեռագրերի մի զգալի մասն անթվական է. անհայտ են շատերի գրչության վայրի, գրչի, ծաղկողի, ստացողի և ձեռագրի ստեղծմանը մասնակցած մյուս մարդկանց անունները: Այլ կերպ ասած, հնագույն հայ ձեռագիր հուշարձանների մեծ մասի առաջացման հանգամանքներն ու միջավայրերն անհայտ են գիտությանը: Բավական է ասել, որ Մաշտոցի անվան Մատենադարանի¹ հայերեն ամբողջական ձեռագրերի այժմ 10970 միավոր ամփոփող հսկայական հավաքածուի ձեռագրերից IX—XII դդ. թվագրվողների քանակը 115 է. նրանցից գրչության որոշակի թվական ունեն միայն 46-ը, հայտնի են 73-ի գրչի, 58-ի ստացողի, 38-ի գրչության վայրի և 16-ի ծաղկողի անունները: Պետք է նկատի ունենալ, որ այստեղ երկու դարով (ասենք՝ IX—X, X—XI) թվագրումները քիչ չեն. այս դեպքերում սխալների հավանականությունը կարող են մեկ-երկու դարով տեղաշարժել նախկին թվագրումը: Հատկապես ցավալի է վաղ ձեռագրերի գրչավայրերի անունների բացակայություն հաճախադեպությունը, որովհետև այս տեղեկության չգոյությունը մեծ մասամբ սակավախոս կամ անօգտակար է դարձնում մյուսների առկայությունը: Թեև հին ձեռագրերի մեծ մասը նկարազարդ ավետարաններ կամ այլ ծիսագրքեր են, բայց շատ ավելի զգալի է ծաղկողների անունների սակավությունը:

Ինչ խոսք, որ այս հաշվումներով չենք ուզում ասել, թե հետագա դարերի անթվական ձեռագրերն ավելի քիչ են. միայն թե այստեղ թվագրվածների ու անթվականների հարաբերակցությունը միշտ և զգալիորեն առաջինների օգտին է, իսկ երկրորդների ճիշտ թվագրման համար համեմատական նյութը՝ շատ ավելի մեծ: Միաժամանակ, եթե չորս դարին (IX—XII) ընկնում է 115 ձեռագիր (մեկ դարին մոտ 29 ձեռագիր), ապա հաջորդ յոթին (XIII—XIX)² 10855 (միջինը՝ 1551):

Վաղ շրջանի ձեռագրերի սակավությունն ու վնասվածությունը լիովին հասկանալի է. դարերի միջով նրանց անցած ճանապարհը հետագա հարյուրամյակների ձեռագրերի համեմատ ավելի երկար է, ժամանակի և պատահարների ավելի զործոններից առավել հաճախ են տուժել և կորցրել ձեռագրագիտության ու աղբյուրագիտության համար անգնահատելի տեղեկություններ կրող իրենց թերթերն ու տողերը: Սակայն նրանցից յուրաքանչյուրը հայ հնագույն մի գրչության օջախից կամ ուսումնագիտական կենտրոնից հրաշքով փրկված թանկագին մասունք է և իրեն ծնունդ տված միջավայրի մասին վկայող միակ փաստաթուղթը, ուստի և այս հուշարձանների համակողմանի և մանրակրկիտ հետազոտությունը պետք է լինի հայ ձեռագրագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը²:

¹ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը, նաև այս հոդվածի նյութ Ձ 1522-ը, ՄՄ համալուրագրամբ և առանց համարի հիշատակման այսուհետև հղելու ենք շարադրանքի մեջ: ՄՄ 1522-ից արվող վկայակոչումների դեպքում նշելու ենք միայն ձեռագրի էջը:

² Այդ առումով չափազանց շնորհակալ աշխատանք է կատարում Ա. Ս. Մաթևոսյանը. նրա ուշադրով հետազոտությունները բացահայտել են մի շարք հին ձեռագրերի հետ կապված խրթին և կարևոր նորություններ բերող շատ հարցեր:

Այդ ձեռագրերից մեկն էլ մեր ուսումնասիրության³ առարկա ՄՄ 1522 ձառննտիրն է, որ ըստ ձեռագրացուցակի գրվել է XII դարում «Հովհաննավանքում»⁴։ Այն մեծադիր է՝ ունի 52,5×33 սմ մեծության ասիական հաստ լաթաթղթի 570 թերթ (գրությունը երկսյուն է, մի սյունը՝ 38,5×19 սմ, տողաքանակը՝ 37—42)։ Գիրն անցման բոլորգիրն է, որ ունի և՛ երկաթագրի, և՛ բոլորգրի տարրերը⁵։ Կազմը, որ հավանաբար ժամանակակից է ձեռագրին, դրոշմազարդ՝ շագանակագույն կաշի է, միջուկը՝ 1,5 սմ հաստությամբ տախտակ, աստառը՝ կապույտ և դեղին շերտերով զարդահյուս թավիչ։

Բովանդակությամբ այս մատյանը ձառննտիր ժողովածուի սկզբնական տեսակներից կամ գոյացման աղբյուրներից մեկն է՝ «Մարտիրոզոգ»—վկայաբանությունների հավաքածու կամ, ըստ Մ. Ավգերյանի, «Վկայաբան»⁶։ Այստեղ գրառված են բազմաթիվ վկայաբանությունների հայերեն հնագույն օրինակները, սա նաև լավագույնը և նախընտրելին է այն երկու հին ձեռագրերից, որոնք հիմնականում պահպանել են Արրահամ խոստովանողի «Վկայք Արևելից» ժողովածուի մասերը⁷։ Մի խոսքով, Մարտիրոզոգ-ձառննտիր-Տոնական-Տոնապատճառ-Հայսմավուրք ժողովածուների առաջացման, զարգացման և փոխազդեցությունների պատմության ուսումնասիրման համար այս ձեռագիրը հին և հիմնական աղբյուրներից մեկն է։

Գրչի բուն հիշատակարանը ձեռագրի վերջին թերթերի հետ միասին ընկած է եղել դեռևս XVII դարի կեսերին, ուստի և ձառննտրի գրության որոշակի թվականն ու տեղն անհայտ են։ Բայց նրա տարբեր էջերում պահպանվել են մոտ 60 համառոտ հիշատակագրություններ, որոնք, հայսմավուրքներին բնորոշ հետևողականությամբ, եզրափակում են գրեթե բոլոր վկայաբանություններն ու վարքերը (99 նյութ-միավոր)։ Նրանք բազմիցս հստակ և որոշակի հայտնում են ձեռագրի գրչի և ստացողի անունները. առաջինը՝ Յովհաննէս (առավել հաճախ՝ Յոհաննէս), երկրորդը՝ Ռուբէն (երբեմն՝ Ռովբէն կամ Ռոբէն, երբ անգամ էլ՝ Հռուբէն) կուսակրոն քահանայ։

Հիշատակագրությունների մեծ մասի նպատակը գրչին և ստացողին հիշելու խնդրանքն է. «ԶՌուբէն ստացիլ գրոցս և դՅոհաննէս գրիլ յիշեսջիբ յաղաթս, եւ ողջ լերուք ի Տէր» (14ա)⁸։ Ընդունված ձևով ստացողը հաճախ հիշվում է գովաբանական, իսկ գրիչը՝ ստորացուցիչ մակդիրներով. «Զձոգելից քահանայ գՌուբէն»՝ դատացող գրոցս յիշեսջիբ ի սուրբ յաղաթս ձևւր, ընդ նմին և դՅոհաննէս գրիլ մեղաւոր, եւ Քրիստոս յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի։

3 Ներկա շրջվածին ձեռագրիկն ենք արվեստագիտության զոկտոր Տ. Ա. Իզմայլովի տառադարձությամբ. մեր ձեռագրագիտական և նրա արվեստաբանական քննությունները նպատակ ունեն միմյանց լրացնել և առավել համակողմանի ներկայացնել Հովհաննավանքում ստեղծված այս մեծածավալ և մեծարժեք մատյանը։

4 Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան. հ. Ա, Երևան, 1965, էջ 573—574, ՄՄ 1522-ը Կարենյան բուցակի 936 նամարն է։

5 Օրինակ՝ Ա-ն շարադրանքում եռաստեղ է՝ ա, և-ը հիմնականում երկանի է՝ եմ, բաց հազվադեպ էլ նաև միանիշ ձևը՝ ե։

6 Դրոշմադարձիչը մեծ արժեք ունեն հայ կազմարվեստի ապագա հետազոտողի համար։

7 Տե՛ս Մ. Ա. դ եր ե ա ն. Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. հ. ԺԱ, Վենետիկ, 1814, էջ ԿԸ։ Մարտիրոզոգ ժողովածուների համառոտ ու անբավարար գնահատականը և մեր ձառննտրի բովանդակության մասին երկու խոսք տե՛ս Մ. Ավդալբեկյան. «Ցայսմաւորը ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը. Երևան, 1982, էջ 22—25։

8 Տե՛ս Արրահամ խոստովանողի Վկայք Արևելից, աշխատասիրությամբ Գ. Տեր-Մերտչյանի. էջմիածին, 1921, էջ Գ. հմտ. Լ. 2. Տ ե ր Պ ե տ ր ո ս յ ա ն. Արրահամ խոստովանողի «Վկայք Արևելից»-ը (քննադատական հետազոտություն). Երևան, 1976, էջ 27—31։

9 Նման խնդրանքներ տե՛ս նաև էջ 21բ, 34բ, 81ա, 99բ, 149ա, 161բ, 164բ, 202ա, 220ա, 226բ, 231ա, 530բ։

ամեն» (211ր)¹⁰։ Ստացողին տրվում են այսպիսի մակդիրներ. «աստուածասէր, աստուածապաշտ, սուրբ, սրբազան, պատուական կուսակրան երէց» և այլն, իսկ իրեն դրիչը նվաստացնում է հաճախադեպ «մեղուցեալ, անպիտան, մեղապարտ, անարժան, անարէնութեան գործովք լի» որակումներով, մի քանի անգամ էլ «շուն» կամ «մեղաւոր շուն» անսովոր կոչումներով։ Որոշ հիշատակագրութիւններ էլ խնդրում են հիշել գրչին և ստացողին՝ առանց նրանց անունները տալու։ «Յիշեսցիք, սուրբ քահանայք, զստացիլ գրոցս և զգրիչ» (74ր)¹¹։ Երկու անգամ էլ գրիչը բողոքում է քնից. «Քունս նեղեաց» (512ա), «Վա՛յ քնոյս» (539բ). երևում է, ինչպես հետո կտեսնենք՝ ոչ առանց պատճառի, մեր գրիչը ձեռագիրն ավարտելիս շատ է շտապել և գիշերը ցերեկ է դարձրել։ Մի ուրիշ տեղում էլ Հովհաննեսը շեղվում է իրեն ու իր պատվիրատուին հիշելու սովորական բանաձևից և աստծուն աղաչում ողորմել «եղբար իմոյ Սուքիասի քահանայի» (208բ). ձեռագրի գրչութեան ավարտի շրջանում վերջինս հոգևոր այլ աստիճան ուներ. «եղբար իմոյ Սուքիասու նորոգ վարդապետի» (504ա)։ Ենթադրելի է, որ այս Սուքիաս քահանա-վարդապետը մեր գրչի ոչ թե հոգևոր, այլ՝ արյունակից (հարազատ) եղբայրն էր և գործում էր այն վանքում, ուր գրիչն էր։ Բայց դժվար է ասել, թե նա ճառերնորի գրչութեան կամ նկարագրողման հետ որևէ կապ ունե՞ր արդյոք։ Փոխարենը մատյանի սկզբնական հատվածի մի քանի հիշատակագրութիւն ցույց են տալիս, որ Հովհաննեսն իր գործը միայնակ չէր անում, այլ օգնականներ ուներ, որոնց անունները, սակայն, չի հայտնել։ «Եւ մեզ ողորմեսցի Քրիստոս, որք ճառ սրբոյ հայրապետիս (Պոլիկարպոս եպիսկոպոսի—Յու. Վ.) գրեցաք» (56բ), «Աղաչեմ յիշել զաշխատողքս» (92բ), «Ողորմեա յուսացողացս ի քեզ» (104ա), «Տէր, ողորմեա աշխատողացս» (154բ)։ Այս «աշխատողները» երևի գրչի աշակերտներն էին, որոնք գուցե թուղթ էին կոկում, գուցե և գրում էին առանձին հատվածներ կամ կատարում այլ օժանդակ գործեր (ձեռագրի այս մասում կազմելու մասին դեռևս խոսք լինել չի կարող), բայց դրանք նրանց անունները հիշատակելու չափ ծավալուն կամ նշանակալից չէին։

Ճառերնորի գրչութեան վայրի (որտեղ գործում էին Ռուբեն քահանան, Հովհաննես գրիչը, նրա եղբայր Սուքիաս քահանա-վարդապետը և օգնականները) անունը մեր համոզմամբ տրված է ստացողի անունից գրված միակ հիշատակագրութեան մեջ. «Եւ ես՝ մեղուցեալ և անարժանս ի կրանաւորս Ռուբէն, որ և տրուպ ամենայն եղբարցս, որք կան ընդ հովանեաւ Սուրբ Կառապետիս՝ ի վանս Յոհանու, յիշել հայցեմ՝ որք կարդայք. ևս և զյետին գրիչս՝ զմեղաւորս» (305ա)։ «Յոհանու» վանքն Արագածոտնի հանրահայտ Հովհաննավանքն է (այժմյան Աշտարակի շրջանի համանուն գյուղում), իսկ «Սուրբ Կարապետը» կամ «Սուրբ Յովհաննէս Կարապետը»՝ նրա անվան տարբերակներից մեկն է¹²։ Ուրեմն, Ռուբեն կուսակրոն քահանան այստեղ հստակ ասում է, որ ինքը Հովհաննավանքի միաբան է, ավելին՝ խնդրում է հիշել իր միաբանակիցներին, որոնց միանում է նաև Հովհաննես գրիչը՝ իրավացիորեն շեշտելով իրեն. «ևս և զյետին գրիչս»։ Մի այլ, ավելի ընդարձակ հիշատակարան վանքի և նրա միաբանութեան մասին հաղորդում է նոր մանրամասներ. «Բազում նեղութիւն կրեցի ես՝ Յոհաննէս գրիչ ի սուրբ Գրիգորիս. ոչ մարմնոյ վաստակ կամ նեղութիւն, այլ՝ մտաց և խորհրդաց յաղագս աւրինակի այս

¹⁰ Նման՝ տե՛ս էջ 46բ, 132բ, 140ա, 171ա, 191ա, 264բ, 272բ, 296ա, 327ա, 388ա, 404բ, 465բ, 518ա, 538ա, 546բ։

¹¹ Նման՝ տե՛ս էջ 67ա, 71բ, 115բ, 180ա, 195բ. կան նաև այնպիսիները, ուր ստացողի անունը տրված է, գրչինը՝ ոչ. տե՛ս 132բ, 171ա, 264բ։

¹² Հովհաննավանքի անունների և նրանց վերաբերող ավանդութիւնների մասին տե՛ս Զաքարիա Սարկաւազի Պատմագրութիւն. հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 6—29. հմմտ. Կ. Ղաֆազյան. Հովհաննավանքը և նրա արձանագրութիւնները. Երևան, 1948, էջ 10—21։

ճառից, քանզի եղբայր ոմն կաթարոս¹³, որոյ անունն հոյլենց Յովանէս ճանաչի, որոյ իւրն էր աւրինակ՝ մեծ գիրք, ոչ աայր ի գաղափար, կարծեմ վասն նախանձու, և յորժամ վաճառ և հայրն ետ, նա զշարեալ գայր յափշտակել, իսկ ես ողորջանաւք խնդրէի. հազիւ կարացի գրել Ը (8) ճառ, և ապա խլեաց և տարաւ, և Բ (2) տետրն անգիր մնաց, իսկ իմ տարակուսեալ յԱստուած ապաւինեցաւ, յանկարծ պատահեաց գիրք մի Տաւնացուցակ լլլ» (567բ):

Գ. Տեր-Մկրտչյանն այս հիշատակարանի առաջին ընդգծված արտահայտութեան հիման վրա եզրակացրել է, որ թեև ստացողը Հովհաննավանքի միաբան էր, բայց ձեռագիրը գրվել է Սաղմոսավանքում, որի եկեղեցիներից մեկն ըստ XII դարի երկրորդ կեսին այնտեղ գրված ՄՄ 3777 ճառընտրի մի հիշատակարանի կոչվում էր «Սուրբ Գրիգոր»¹⁴: Սակայն եկեղեցու կամ մատուռի անունով որևէ ձեռագրի գրչության վայր-վանքը պարզելը շատ դժվար է նախաին պատճառով, որ ՄՄ 3777 ձեռագրի հիշյալ հիշատակարանը Սաղմոսավանքում ևս հիշում է «Սուրբ Կարապետ» եկեղեցի¹⁵, որ Հովհաննավանքի հիմնական անունն էր (գուցե ՄՄ 3777-ում, իրոք, նկատի է առնված Հովհաննավանքը), իսկ Զաքարիա Քանաքեռցու մի վկայության համաձայն «Սուրբ Գրիգոր» եկեղեցի կամ մատուռ կար նաև Հովհաննավանքում¹⁶, բայց այստեղ առավել էականն այն է, որ Գ. Տեր-Մկրտչյանի եզրակացությունն ընդամենը հիշատակարանը սխալ հասկանալու արդյունք է: Վերջինս հաջորդում է հետևյալ ձևով. «Ներանելոյն Գրիգորի եպիսկոպոսի նիւսացոյ՝ Ի վարս ի սքանչելի սրբորոյն Գրիգորի Սքանչելագործի նիոյ Կեսարու եպիսկոպոսի» (546բ—67բ). ուրեմն և «բազում նեղութիւն կրեցի ի սուր Գրիգորիս» տողից պետք է եզրակացնել, որ գրիչն իր գաղափար օրինակի տիրոջից նեղություն է կրել ոչ թէ Սաղմոսավանքի Ս. Գրիգոր եկեղեցում, որն այս ձեռագրի և հիշատակարանի հետ կապ չունի¹⁷, այլ՝ Գրիգոր Սքանչելագործի բավական ծավալուն մարդը (21 թերթ) գրելու ժամանակ, որի ընթացքում հոյլենց Հովհաննեսը կարող էր մի քանի անգամ ետ պահանջել իր օրինակը, որ և մեր գրչին ստիպել էր գիշերը ցերեկ անել («Վա՛յ քնոյս»):

Այսպիսով, ինչպես մեր ճառընտրի ստացողը, գրիչը, նրա եղբայրը և օգնականները, նույնպես և գաղափար օրինակի տեր «կաթարոս եղբայր» հոյլենց Հովհաննեսը Հովհաննավանքի միաբան էր, այլապես նա պարտավոր էր լինի ենթարկվել մի այլ վանքի միաբանության և վանահոր կարգադրությունը: Իր սեփական ձեռագիրը տալ գաղափարելու «վանքս և հայրն ետ» Բնութով այս հիշատակարանին նման երկու այլ գրառում էլ թույլ են տալիս խոսել մի այլ հանգամանքի մասին. և՛ ձեռագրի առաջին ութ ճառը (6 մամուլ, թերթ 1—71), և՛ նրա մնացած հիմնական մասը, ինչպես իրավացիորեն նկատել է Միաբանը¹⁸, գաղափարված են հոյլենց Հովհաննեսի օրինակից. «կարի շտապով գրեցի, զի զաւրինակն խլէին՝ զՅովանիսի հոյլենց» (539ա), «Ա՛յ, վա՛յ, ի քիթս ածին աւրինակիս տէրքս» (543ա): Դժվար է ասել, թե գրիչն ինչ է վերցրել իր գտած Տոնացուցակից՝ իր իսկ ակնարկած երկու «անգիր մնացած» մամուլի (7—8-րդ, թերթ 72—95) նյութը, թե ձեռագրի մի այլ հատվածը:

¹³ Այստեղ հնգական երանգով գործածված է հունարեն *κατασκευασ* մաքուր, սուրբ բառը, որով բնորոշվում էր նավատյան աղանգը. տե՛ս նոր բառգիրք հայկազեան լեզուի. Կ. Ա. Վենետիկ, 1836, էջ 1031, (հմտ. Древнегреческо-русский словарь, составил И. X. Дворецкий, т. 1, М., 1958, с. 848):

¹⁴ Տե՛ս Գ ա լ ո ս տ Տ եր-Մ կր տ չ յ ա ն. Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Ա, Երևան, 1979, էջ 319, 322 (այսուհետև՝ Գ. Տ—Մ., Ա.):

¹⁵ Նույն տեղում, էջ 322:

¹⁶ ՄՄ 1522, էջ 568ա, հմտ. Գ. Տ—Մ., Ա., էջ 317:

¹⁷ Մատենադարանի ձեռագրացուցակն իրավացիորեն հուշվի չի առել Միաբանի այս տեղորոշումը. հմտ. այստեղ, ծան. 5:

¹⁸ Գ. Տ—Մ., Ա. էջ 320:

Այսպիսով, այժմ պարզ է նաև ճառերնորի գրչության վայրը՝ Հովհաննավանք: Իսկ գրչության ժամանակի հարցը մոտավոր պարզել է Գ. Տեր-Մկրտչյանը: Այսպես. մեր ձեռագիրն ունի վկայաբանությունների թարգմանության և գաղափար օրինակների հինգ հիշատակարան¹⁹, որոնցից երկուսը վերաբերում են ներսես Շնորհալի կաթողիկոսին (1166—1173). մեկն անթվական է (482թ). բայց քանի որ Շնորհալին այստեղ հիշվում է ոչ թե որպես կաթողիկոս, այլ՝ Գրիգոր Գ կաթողիկոսի (1113—1166) եղբայր, ուրեմն հիշատակարանը գրված է մինչև 1166 թ., իսկ երկրորդը որոշակի թվական ունի՝ «Ուէ»—1158 թ. (305ա)։ Ուրեմն, մեր ճառերնորը գրված է 1158 թ. հետո: Միաժամանակ, այս ձեռագիրն «ամեն բանով (նյութ, գրչություն, դարդեր ևն) հար և նման» է վերոհիշյալ ՄՄ 3777 Սաղմոսավանքի ճառերնորին²⁰, որ Գ. Տեր-Մկրտչյանի ստույգ թվագրման համաձայն գրվել է 1186—1187 թթ.²¹։ Ըստ Միաբանի համեմատության, ՄՄ 1522 և 3777 ճառերնորները «առաքել խմբերի ներկայացուցիչներ են, նման, բայց ոչ նույն բովանդակությամբ, կան վարքեր և ճառք, որ գտնվում են մեկում և պակասում են մյուսում», երկրորդն «ավելի նորագույն հատվածներ ունի, ուստի և հավանականաբար» առաջինից «ուշ է ժամանակով», ըստ այսմ էլ ՄՄ 1522-ի գրչության ժամանակը «փոքր-ինչ ավելի կանոխ»²² է 1186 թ., ուրեմն և՛ գրվել է 1158—1185 թթ. միջև: Նկատենք, որ Սարգիս զորավարի ու նրա որդի Մարտիրոսի վկայաբանությունը (297բ—305ա), որ 1158թ. Շնորհալու ձեռքով սրբագրվել և Հաղբատի առաջնորդ Գեորգեպիսկոպոսին ուղղված՝ Շնորհալու նույն թվականին գրված թղթի (296բ—7ա) հետ ուղարկվել էր Հաղբատ, կարճ ժամանակ անց այնտեղից էլ կարող էր հասնել Հովհաննավանք²³, ուստի ՄՄ 1522 ճառերնորի գրչության հիշյալ մոտավոր ժամանակը, անդգույշ չլինելով, կարելի է կրճատել ընդամենը 6—7 տարով և ընդունել 1165—1185 թթ. միջակա քսանամյակը:

Վերջերս Ա. Ս. Մաթևոսյանն այս ձեռագրի հիշատակագրություններից ամենաբնորոշ 15-րդ տպագրել է իր կազմած հատորի անթվական հիշատակարանների շարքում²⁴, այսինքն՝ այն համարել է XIII դարի հուշարձան: Ձեռագրի գրչության վայրը նա իրավագիտորեն համարել է «Յոհանու վանք»-ը, սակայն եթե ճառերնորը ուղիղ մեկ հարյուրամյակով ետ բերելու համար անառարկելի կովաններ կային, ապա անհրաժեշտ էր գտնել մի համառոտ ծանոթագրությամբ ապացույց, որ Միաբանի առ օրս չվիճարկված թվագրումը սխալ է: Ի դեպ, բովանդակությամբ, նյութով ու ժամանակով մեր ձեռագրի հետ սերտորեն առնչվող Սաղմոսավանքի ճառերնորի հիշատակարաններն այս հատորում չեն տպագրվել, ուրեմն՝ պետք է լինեն XII դարի հիշատակարանների սպասվող պրակում:

19 Երկուսը (208բ, 226բ) Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսին (1066—1105) են և վերաբերում են 1100 և 1103 թթ., իսկ մեկը Համադասպ և Սահակ Արծրունիների վկայաբանության վերջում է (374բ) ու խնդրում է հիշել նրանց ազգական Մուշեղ Արծրունուն:

20 Գևորգյան հավաքածուի 939 համարն է:

21 Տե՛ս Գ. Տ—Մ., Ա, էջ 321, 324: Այս ձեռագիրն ունի ծաղկողի մի անանուն հիշատակություն. «Զմեղապարտ ծաղկողս յիշեա, աղաչեմ» (ՄՄ 3777, էջ 192բ). սրա գիրը տարբեր է Մարկոս և Մխիթար եղբայր-գրիչների գրից, ուրեմն և՛ ծաղկողը նրանցից տարբեր մի երրորդ մարդ էր: Մեր ձեռագիրն այսպիսի հիշատակագրություն չունի, գրչի եղբայր Սուքիաս վարդապետի անվան հիշատակումը նրան ծաղկող համարելու հիմք չի տալիս. մնում է ենթադրել, որ Հովհաննավանքի ճառերնորի ծաղկողը նույն ինքը Հովհաննես գրիչն էր:

22 Գ. Տ—Մ., Ա, էջ 325, 320:

23 Հոռմկլայի կաթողիկոսարանի և Հաղբատ-Սանահնի աշխույժ կապերի փաստը վաղուց հայտնի իրողություն է, իսկ Հովհաննավանք, Մարմաշեն, Հաղբատ և Սանահնի վանքերի հնամենի առավել սերտ կապերի մասին վկայում են Զաքարիա Քանաքեռցու գրառած մի շարք վանական ավանդույթներ. տե՛ս Զ ա թ ա Ր ի ա Ս ա Ր կ ա լ ա գ, Գ, էջ 9—11:

24 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 912—4:

12 «Հանդիս», № 4

Հովհաննավանքի կաթողիկոս եկեղեցու²⁵ հյուսիսային պատի կենտրոնական սասուն՝ «ցածրուտ» պահպանվել է XIII դարով թվագրվող մի արձանագրություն, որն ուղադրավ տեղեկություն է հաղորդում մեր ճառընտրի ստացողի մասին. «Ազնույթեանս քրիստոսի ես՝ Մխիթար քահանա, առաքելու մեծիս Ռուբինա²⁶ քահանաի, ետու գիմ ալգին ի սուրբ ուխտս, որ է Տանձուտ: Եւ սպասաւորք սոցա սահմանեցին ի տարին Դ (4) ար ժամ ի տանի սուրբ Յակորա՝ Ա (1) ինձ, Ա (1)՝ հաշկա, Ա (1)՝ մտիկնա (իմա՝ Հազարտիկնա—Յու. Վ.), Ա (1)՝ Գինէվարդին: Ով շանէ, ՅժԸ (Յ18) հայրապետաց նզովիս²⁷: Զպետք է կասկածել, որ այս «մեծ Ռուբին» քահանան մեր ձեռագրի ստացողն է և որ նրա աշխարհական քահանա-աշակերտ Մխիթարն իր ալգին Հովհաննավանքին է նվիրել ուսուցչի մահվանից հետո՝ XIII դարի երկրորդ-երրորդ տասնամյակներում: Իսկ եթե մեկն իր նվիրատվական արձանագրության մեջ իրեն զարդարում է աղվանքի հանգուցյալ միաբանին աշակերտած լինելու արժանիքով, ապա չպետք է կասկածել, որ ուսուցչի «մեծ» լինելը, հեղինակությունն ու բարի հիշատակը համընդհանուր ճանաչում ունեին: Միաժամանակ, եթե այդ հեղինակավոր քահանան թի հալալ արդեանց» օրինակել է տվել ՄՄ 1522 հարուստ և ըստ ամենայնի ուղադրավ ու արժեքավոր ճառընտիրը, ապա չպետք է կասկածել նաև, որ նա ուրիշ աշակերտներ ևս ուներ և որ այս Մարտիրոսը նրան պետք էր ուսումնական կարիքների համար. այսինքն՝ XII դարի երկրորդ կեսին Հովհաննավանքում գոյություն ուներ վանական մի դպրոց, որի ուսուցիչներից էր Ռուբին կուսակրոն քահանան, աշակերտներից՝ Մխիթար քահանան՝ իսկ այնտեղ օգտագործվող գրքերից մեկը՝ ՄՄ 1522 ճառընտիրը: Ուսումնագիտական և մշակութային համանման մի այլ երևույթ՝ վանական դպրոց, ենթադրելի է Սաղմոսավանքի համար ևս. ըստ որում, եթե Հովհաննավանքի Մարտիրոսը գաղափար օրինակը պատկանում էր նրա միաբան խոյլենց Հովհաննեսին, ապա Սաղմոսավանքի ճառընտիրն էլ օրինակվել է վերջինիս միաբան «եղբայր Թամայի» ձեռագրից²⁸: Ուրեմն, մեղ հասած այս երկու ծավալուն ճառընտիրներից բացի, XII դարի երկրորդ կեսին իրար բավական մոտ գտնվող Հովհաննավանքում և Սաղմոսավանքում գոյություն ունեին նաև նրանց մայր օրինակները և այլ ձեռագրեր, որոնք բազմացվում էին: Սելջուկների հարստահարումներից հետզհետե ուշքի եկող այս կարևոր կենտրոնների ծաղկումը պետք է սկսվեր մեկ-երկու տասնամյակ հետո՝ Զաքարյանների տիրապետության շրջանում, բայց մինչ այդ՝ XII դարի երկրորդ կեսին, վանական կյանքն այս մենաստաններում բավական աշխույժ էր. և՛ հնավանդ Հովհաննավանքում, և՛ նոր բարձրացող Սաղմոսավանքում կային բարձրակարգ գրիչներ և գրչատներ, որոնց արտադրանքը հարստացնում էր վանական մատենադարանները և ծառայում վանական դպրոցներին:

Պետք է ճշտել այս ձեռագրերի գրչության հանգամանքներից մեկը ևս. Սաղմոսավանքի ճառընտրի հիշատակարաններից մեկում գրված է «Զեղրայրն մեր ղՔառասունքն, կրանաւորական կարգաւք պատուեալ, որ զնիւթ կազմութեան սորա երեւ ի Տփիւեաց և զաւլ և կոնակ յԱնո, յիշեսցիք ի Քրիստոս»²⁹, Գ. Տեր-Մկրտչյանն այս տողերը մեկնաբանել է հետևյալ ձևով. «Նյութը, այն է՝ թուղթը բերված է Տփիսից, օղակ և կոճակները՝ կազմի համար՝ Անսուց»³⁰, Այս բացատրությունը մեր կարծիքով ճիշտ չէ. «Նիւթ կազմութեանը» պետք է

²⁵ Կառուցվել է 1216—1221 թթ., տե՛ս Կ. Ղաֆադարյան. Հովհաննավանքը, 1929—30:

²⁶ Կ. Ղաֆադարյանն անունը կարդացել է «Ռուբինա» ձևով, բայց լուսանկարից հստակ երևում է, որ ՌԲ-ն գրված է կապրով՝ ՌԲ, որի մեջ կան Ո, Ի և Բ տառերի բոլոր մասնիկները:

²⁷ Կ. Ղաֆադարյան. Հովհաննավանքը, էջ 85 (ընդգծումը մերն է—Յու. Վ.) հմտ. Զաքարյան Սարկաւադ, Գ, էջ 25:

²⁸ Տե՛ս Գ. Տ—Մ., Ա, էջ 323:

²⁹ ՄՄ 3777, էջ 192ր, հմտ. Գ. Տ—Մ., Ա, էջ 322:

³⁰ Գ. Տ—Մ., Ա, էջ 323:

հասկանալ ոչ թե աստեղծման, կառուցվածքի նյութն, այսինքն՝ թուղթ իմաստով, այլ՝ «կազմման, կազմելու նյութն», այն է՝ կտշի, միջուկի տախտակ և աստառի համար անհրաժեշտ զործվածք (մեկը կամ երեքը միասին)։ «Աւղը» (կազմի կապիչների ծայրերն ագուցելու օղը) և «կոճակը» (կազմի առաջին փեղկի եզրին ամրացվող ելուստը, որին ագուցվում է օղը), որ բերվել էին Անիից, իսկապես նախատեսված էին կազմի համար, նույն նպատակի համար պետք է լինեին նաև «նիւթ կազմութեանը», այս դեպքում՝ երևի կաշին, հատկապես որ նույն հիշատակարանը մի քանի տող առաջ ցույց է տալիս, որ կազմ, կազմել և կազմութիւն բառերով Սաղմոսավանքի ճառերնորն ուղղակիորեն նկատի ունի գրքի՝ ձեռագրի կազմը (переплет), և ո՛չ նրա կառուցվածքի հիմնական տարրը՝ թուղթը. մատչանիս գրիչները պատմում են, որ սելջուկներն իրենց է՝ ձեռագրի մի մասը գերեզմարել էին Դվին, ապա ավելացնում, որ գերեզմար մասը «դրամագին արարեալ, դարձուցեալ, կատարեալ, կազմեցաք. ձեռամբ մերով և տուար ի Սաղմոսավանք»³¹, այսինքն՝ «փրկագնեւով, վերադարձեւով և ամբողջացեւով, մեր ձեռքով կազմեցինք»։ Այս ճշգրտումը կարևոր է, որովհետև Միաբանի սխալը կարող էր զարգացվել և ենթադրվել, թե Սաղմոսավանքին մոտ գտնվող Հովհաննավանքի ճառերնորի թուղթը ևս բերվել է Տփլիսից (հատկապես որ երկու ձեռագրի թուղթն էլ իրար լիովին նման են), ուրեմն և այնտեղ կար թղթի պատրաստման որևէ արհեստանոց, որ, ինչպես տեսանք, կատարյալ սխալ կլինեին։

Ինչևիցե, Ռուբեն քահանայի մահից հետո նրա ճառերնորը ժառանգաբար մնացել է Հովհաննավանքին, որտեղ և 1687 թ. Զաքարիա Քանաքեռցին այն տեսել է շահագանց վատ վիճակում. «հնացեալ և անկեալ կայր և բաժանեալ զթուղթսն ի միմեանց, վասն որոյ սիրտ իմ մղկտայր տեսանելով զսալայսէս, և ոչ գոյր իմ ինչս, զի տայի ճարտար նորոգողաց վարձս, զի նորոգեսցեն»։ Սակայն որոյ առեալ ի ձեռս, ըստ տգիտութեան իմում կարկատեցի» (569ա)³², նորոգման համար Զաքարիան օգտագործել է երկու այլ, հավանաբար նույնպես հնացած, ձեռագիր. Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի XII դարի մի օրինակ (մեծությունը մոտ 36×27 սմ, թուղթ, անցման բոլորգիր, երկսյուն, 24 տող, գրիչ՝ Գէորգ, ստացող՝ Յովհաննէս), որի 16 թերթը բացելով, ճառերնորի համար դարձրել է 8 պահպանակ (Ա—Դ՝ սկզբում, Ե—Ը՝ վերջում)³³, իսկ բազմաթիվ այլ թերթեր ըստ հարկի կտրտելով, կարկատել է ճառերնորի գրեթե բոլոր թերթերը³⁴։ Երկրորդը եղել է Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Մատթէի» երկի XI—XII դդ. մի ձեռագիր (թուղթ, անցման բոլորգիր, երկսյուն), որից մոտ 30 կտոր կարկատան կա ճառերնորի տարբեր թերթերի վրա։ Ինչ իոսք, որ այս գործերի բնագրագիտական քննությունն ապագայում չի կարող արվել առանց ՄՄ 1522 ճառերնորի պահպանակների ու կարկատանների ուսումնասիրման։

Զաքարիա Քանաքեռցին ճառերնորի մեջ է մտնել իր մի արժեքավոր հավելագրությունը. «Կոնդակ սուրբ ուխտին Յօհանու վանից» (483ա—496բ), որը կազմում է նրա պատմության հրատարակության Գ հատորը։ Դեռևս Գ. Տեր-Մկրտչյանն է նկատել, որ ճառերնորի այս ինքնագիր հավելման համեմատ Հովհաննավանքի կոնդակի տպագրությունը որոշ պակասներ ունի, որոնք պետք է լրացվեն Զաքարիայի երկի նոր հրատարակության ժամանակ³⁵։

31 Գ. Տ—Մ., Ա. էջ 322, ՄՄ 3777, էջ 192բ։

32 Հմմտ. Գ. Տ—Մ., Ա. էջ 318։

33 Համապատասխանում են տպագրի՝ Երանելոյն Կիրոյի Երուսաղէմայ հայրապետի Կոչումն ընծայութեան. Վիեննա, 1832, էջ 154—61, 167—9, 183—6։

34 Օրինակ, հմմտ. ՄՄ 1522, էջ 171բ և Կ իւր է դ, տպ., էջ 103, 195բ և էջ 106, 409ա և էջ 99 և այլն։

35 Տե՛ս Գ. Տ—Մ., Ա. էջ 317։ Մեր քննության առարկա ճառերնորը Զաքարիայի Կոնդակի կարևոր աղբյուրներից մեկն է և այնտեղ հիշատակվում է բազմիցս. տե՛ս Զ ա թ ա ի ա Ս ա Ր կ ա լ ա զ, Գ, էջ 6, 29 և այլն։

Այժմ երկու խոսքով անդրադառնանք ձեռագրի ամբողջականության կամ պահպանվածության խնդրին: Սկիզբն անվնաս է՝ առաջին նյութն սկսվում է ճակատադարձով և լուսանցային «Ա» համարանիշով (1ա): Այլ է վերջի հարցը. նորոգման հիշատակարանում Զաքարիան գրել է. «ոչ գտի օրինակ, զի զկարկատեալսն գրէի, որպէս և զվերջին թուղթս Յովհաննէս պատմութեանն» (569ա): Սա կրկնվում է նաև նրա կազմած նյութերի ցանկում. «ԳԼ. Յօհաննէս պատմագիր» (570բ): Կարենյան ցուցակի կազմողները եզրակացրել են, որ ձեռքնտրի վերջում եղել է նաև «Յովհաննէս պատմագիրն, որպէս երեւի ի ցուցադարձութենէ Զաքարիայի, այլ ձեռն անհարազատ բարձեալ է զայն»: Միաբանը կարծում է, որ Զաքարիայի «Յօհաննէս պատմութիւն» ասածը գրչի վերը բերված թերի հիշատակագրութիւնն է (567բ), ուրեմն և՛ «այդպիսի կորուստ աեղի չի ունեցել, և Զաքարիայի նորոգածը շատ քիչ վնասներով հասել է նույնությամբ մեր ձեռքը»³⁷: Սա, անշուշտ, տրամաբանական է, բայց եթե հաշվի առնենք, որ Քանաքեռցու ցանկը գերձգրիտ է և նրա համարները լիովին համապատասխանում են ձեռագրի ունեցածներին³⁸, ապա գուցե ճիշտ չի լինի անառարկելիորեն պնդել, թե Զաքարիան շփոթել և հիշատակագրութիւնը (ո՛չ գլխավոր հիշատակարանը, որ մեր ձեռագիրը չունի) պատմութիւն է կոչել, և թե նա չէր կարող ձեռքնտրի մեջ տեսած լինել Հովհաննէս Դրասխանակերտցու իրեն ծանոթ Պատմության այժմ բացակայող մեկ կամ մի քանի թերթ: Բոլոր դեպքերում, ձեռագրի վերջին հին (567) և Զաքարիայի ավելացրած (568—570) թերթերի միջև 1—1,5 սմ չափով բաց են այն հասարակ թելերը, որոնց ծայրերն ամրացված են կազմի զույգ փեղկերին և որոնց կարված-ամրացված են նրա բոլոր պահպանված մամուլները, այսինքն՝ ձեռքնտրի վերջից ընկել է մի քանի մամուլ (ի դեպ, մամուլների վերջին կարողը եղել է Զաքարիան, բայց վերոհիշյալ հաստ թելերը նա չի փոխել և, գուցե, չի էլ անջատել կազմի փեղկերից):

Քանաքեռցուց հետո ևս ձեռքնտիրը շարունակել է մնալ Հովհաննավանքում: Նրա մի էջում Նղվարդեցի ոմն տիրացու Նիկողայոս հավաստում է, որ 1709 թ. օգոստոսի 20-ին այցելել է «Ուհանավանք» (275բ), մի այլ տեղում ոմն Կիրակոս քահանա հաղորդում է իր օրհնվելու օրը՝ 1730 թ. մարտի 1 (569բ), նույն տեղում չափածո հնգատողով իր մասին է հիշեցնում նաև Կարբեցի Սահակենց Հովակիմի որդի մեկը (XVII դար): Ապա, ի վերջո, երկու տեղ (1ա, 11բ) կա կարմիր կնքագրող. «Գիրքս այս Սուրբ էջմիածնա է»։ Ենթադրելի է, որ ձեռագիրն էջմիածին է տեղափոխվել ուղղակի Հովհաննավանքից. տեղափոխման ամենահարմար թվացող ժամանակը XIX դարի 30-ական թթ. են, որոնք հանդարտ էին նախորդ՝ ձեռագրեր ժողովելու համար անհարկի և խառնակ 40-ամյակի համեմատ: Էջմիածնում հետագայում այն ստացել է Կարենյան ցուցակի 936 թվահամարը (էջմիածնի հին՝ նույնպես 936), իսկ 1911 թ., երբ Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը միավորեց էջմիածնի ձեռագրական հավաքածուները, իր այժմյան համարը՝ 1522:

Այսպիսով, ՄՄ 1522 Մարտիրոս-ձեռքնտիրը 1165—1185 թթ. ընթացքում գրվել է Հովհաննավանքում, Հովհաննես գրչի (գուցե նաև՝ ծաղկողի) ձեռքով, Ռուբեն կուսակրոն քահանայի պատվերով. գրչն ունեցել է նաև օգնականներ, որոնք, հավանաբար, իր աշակերտներն էին: Զեռնտիրն ունի աղ-

³⁷ Սայր ցուցակ ձեռագիր մատենից զրադարանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի..., Թիֆլիս, 1863, էջ 35:

³⁸ Կ. Տ—Մ., Ա., էջ 319:

³⁹ 369ա էջի լուսանցադարձի հետ կտրված է եղել նաև ԿԸ համարներից, ուստի և Քանաքեռցին իր ցանկի վերջում ստիպված ծանոթագրել է. «Համարագիրն ԿԸ էր պիտոյ, ԿԹ էր գրտն. նույնպես և ևս գրեցի ի ցանկն. անմեղագիր լերուք Զաքարիա» (570բ):

ընդհանրական և ընդհանրական անուրանալի արժեք, միաժամանակ՝ XII դարի երկրորդ կեսին Հովհաննավանքում գոյություն ունեցած վանական դպրոցի՝ ուսումնագրական կենտրոնի և բարձրորակ ու արգասավոր գրչության օջախի մասին մեկուրդ եզակի և թանկարժեք հուշարձան է:

ОБ ОВАНАВАНКСКОЙ РУКОПИСИ ЧАРЫНТИР

Ю. А. ВАРДАНИЯН

Резюме

Статья посвящена кодпкологическому анализу рукописи № 1522 Матенадарана им. Маштопа. Уточняется, что она написана в монастыре Ованаванк провинции Арагацотн Центральной Армении (в одноименном селе нынешнего Аштаракского р-на АрмССР) в 1165—1185 годах писцом (возможно, и художником) Ованнесом по заказу монашествующего священника Рубена, который согласно лапидарным надписям Ованаванка был «великим учителем» монастырской школы. Тем самым, помимо неоспоримой источниковедческой и текстологической ценности, Ованаванкский мартиролог-чарынтир имеет большое значение как свидетельство существования во II пол. XII в. в Ованаванке научно-педагогического центра и продуктивного скриптория с высококвалифицированными книжниками.